ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ
ՓՐԱՅՎԻԹ & ԻՆՎԵՍՏՄԵՆԹ ԲԵՆՔԻՆԳ

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԹԻՎ 01-2019 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ք.Ժնև

2019 թվականի ապրիլի 29-ին, ժամը 11:00-ին, Շվեյցարիայի Համադաշնության, Ժնև քաղաքի, Դե Մալանյի փողոց, 22 հասցեում տեղի ունեցավ «ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, որին մասնակցում էին «ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի բաժնետերեր «Էյչ-Վի-Էս Հոլդինգ» ՍՊԸ-ն (14588 ձայնի իրավունքով), ի դեմս «Ա» կարգի մենեջեր Վարտան Սիրմակեսի:

Նիստին մասնակցում էր նաև Արդեն Սելլեֆյանը:

Հաշվի առնելով, որ ժողովին ապահովված է «ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի ձայնի իրավունք տվող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերով (ձայների զումարային քանակը՝ 14588) բաժնետերերի 100 տոկոս մասնակցություն՝ ընդհանուր ժողովը համարվեց իրավասու:
Ժողովի Նախագահ ընտրվեց Վ. Սիրմակեսը, իսկ ժողովի քարտուղար՝ Ա. Սելլեֆյանը:

ՕՐԱԿԱՐԳ

2. «ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2018 թվականի շահույթի բաշխման մասին հարցը:

Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ «ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի ընդհանուր ժողովը.

ՈՐՈՇԵՑ

Երկրորդ հարցով
(զեկուցող՝ Ա. Սելլեֆյան)՝

«ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2018 թվականի ֆինանսական տարվա 5,053,788,000 ՀՀ դրամ զուտ շահույթից 4,000,000,000 ՀՀ դրամը հատկացնել պահուստային հիմնադրամի (գլխավոր պահուստի) համալրմանը՝ դարձնելով այն 20,000,000,000 ՀՀ դրամ, իսկ մնացած 1,053,788,000 ՀՀ դրամը թողնել որպես չբաշխված շահույթ:

Որոշումն ընդունվեց միաձայն:
Որոշումն ուժի մեջ է մտնում 2019թ. հուլիսի 01-ից:

Սույն արձանագրությունը կազմված է 29.04. 2019թ.-ին, հայերեն և անգլերեն լեզուներով, երկու օրինակից, բաղկացած է 2 (երկու) էջից:

Ժողովի նախագահ՝ /ստորագրություն/ Վ.Սիրմակես

Քարտուղար՝/ստորագրություն/ Ա.Սելլեֆյան

Քաղվածքն արված է 11.07.2019թ.-ին՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Բաժնետերերի արտահերթ Ընդհանուր Ժողովի 29.04.2019թ. թիվ 01-2019 արձանագրության բնօրինակից:

Գործադիր տնօրեն՝ Գևորգ Մաչանյան